ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

«12» 11 2014թ. ք.Երևան

ՀՐԱՄԱՆ No 362-Ա

Լ.ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության» մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 28-ի N 1930-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 3-րդ բաժնի 12-րդ կետի դ) ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ (41-2.2-20) Լուսինե Ավետիսի Նազարյանին օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու՝ հետևյալ գործառույթներով.

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը.

2) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը.

3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:

2. Ուժը կորցրած ճանաչել կոմիտեի նախագահի 2014թ. նոյեմբերի 3-ի «Ն. Գևորգյանին տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու նշանակելու մասին» թիվ 347-Ա հրամանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել կոմիտեի նախագահի տեղակալ՝ Դ. Սեդրակյանին:

Կոմիտեի նախագահ՝ Մ. Սարգսյան